# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«03» մարտի 2022 թվականի N 15-Ա

### ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով Ստեփանավան համայնքի ավագանին

*որոշում է*

1. Հաստատել համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի

Համայնքի ավագանիներ.

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| Գրիգորյան Արմեն | | |
| Աբրահամյան Հրահատ | | |
| Մարտիրոսյան Հմայակ | | |
| Իսպիրյան Անուշ | | |
| Պապյան Լևոն | | |
| Գրիգորյան Արմեն Փ. | | |
| Բաղդասարյան Անուշ | | |
| Պապինյան Արմեն | | |
| Դավթյան Արմեն | | |
| Պապյան Արթուր | | |
| Հակոբյան Վանո | | |
| Նալբանդյան Աղունիկ | | |
| Կիրակոսյան Ջոն | | |

Տոնոյան Անդրանիկ

Հարությունյան Լիլիա

Ջուլհակյան Արմեն

Մարտիրոսյան Մարտուն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

03.03.2022թ. հ. Ստեփանավան

1. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Ն. ԱՅՎԱԶՅԱՆ**

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 01.02.2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 02-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ N 2-Ի ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Գ. ՂԱԼԱՉՅԱՆ**

4. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Գ. ՂԱԼԱՉՅԱՆ**

5. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՍԻՆԻ ՓՈՂՈՑ 56/19 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԻՉ ԹԱՄԱՐԱ ԴԱՎԹՅԱՆԻՆ ԵՎ Մ. ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂՈՑ 2/14 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԻՉ ՆՈՒՆԵ ՍԱՐԳՍՅԱՆԻՆԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Ն. ԱՅՎԱԶՅԱՆ**

6. ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Ն. ԱՅՎԱԶՅԱՆ**

7. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԾԱՂԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Ն. ԱՅՎԱԶՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«03» մարտի 2022 թվականի N 16-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օերնքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, Հայաստանի Հանրապետության «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասը Ստեփանավան համայնքի ավագանին

*որոշում է*

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 09-Ն որոշմամբ հաստատված Ստեփանավան համայնքի 2022 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտերը պակասեցնել 7340.0 հազ. դրամով, սահմանել 35743.365 հազ. դրամ:

2. Ստեփանավան համայնքի 2022 թվականի բյուջեի «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» ծրագրի նախահաշվի (բաժին 1 խումբ 1 դաս 1) ծախսերը ավելացնել ընդամենը 10840.0 հազ. դրամով, սահմանել 167781.2172 հազ. դրամ, որից.

. հոդված «4111 – աշխատողի աշխատավարձեր և հավելավճարներ»՝ ավելացնել 5600.0 հազ. դրամով, սահմանել 127600.0 հազ. դրամ

. հոդված «4241 – մասնագիտական ծառայություններ»՝ ավելացնել 360.0 հազ. դրամով, սահմանել 2070.0 հազ. դրամ

. հոդված «4252 – մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում»՝ ավելացնել 280.0 հազ. դրամով, սահմանել 2770.0 հազ. դրամ

. հոդված «5122 – վարչական սարքավորումներ»՝ ավելացնել 4600.0 հազ. դրամով, սահմանել 5849.0 հազ. դրամ

3. Ստեփանավան համայնքի 2022 թվականի բյուջեի «Ընդհանուր բնույթի ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» ծրագրի նախահաշվի (բաժին 1 խումբ 6 դաս 1) ծախսերը ավելացնել ընդամենը 8200.0 հազ. դրամով, սահմանել 70333.6 հազ. դրամ, որից.

. հոդված «4637 – Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» ծախսային հոդվածը ավելացնել 500.0 հազ. դրամով, սահմանել 55309.6 հազ. դրամ:

. հոդված «5113 – շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում»՝ սահմանել 7200.0 հազ. դրամ

. հոդված «5134 – նախագծահետազոտական ծախսեր»՝ սահմանել 500.0 հազ. դրամ:

4. Ստեփանավան համայնքի 2022 թվականի բյուջեի «Ճանապարհային տրանսպորտ» ծրագրի նախահաշվի (բաժին 04 խումբ 5 դաս 1) «5113 – շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» ծախսային հոդվածը պակասեցնել 19640.0 հազ. դրամով, սահմանել 151557.4943 հազ. դրամ:

5. Ստեփանավան համայնքի 2022 թվականի բյուջեի «Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)» ծրագրի նախահաշվի (բաժին 05 խումբ 6 դաս 1) «4637 – Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» ծախսային հոդվածը ավելացնել 300.0 հազ. դրամով, սահմանել 6812.5 հազ. դրամ:

6. Ստեփանավան համայնքի 2022 թվականի բյուջեի «Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)» ծրագրի նախահաշվի (բաժին 10 խումբ 7 դաս 1) «4639 – ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» ծախսային հոդվածը սահմանել 300.0 հազ. դրամ:

Համայնքի ավագանիներ.

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| Գրիգորյան Արմեն | | |
| Աբրահամյան Հրահատ | | |
| Մարտիրոսյան Հմայակ | | |
| Իսպիրյան Անուշ | | |
| Պապյան Լևոն | | |
| Գրիգորյան Արմեն Փ. | | |
| Բաղդասարյան Անուշ | | |

Պապինյան Արմեն

Դավթյան Արմեն

Պապյան Արթուր

Հակոբյան Վանո

Նալբանդյան Աղունիկ

Կիրակոսյան Ջոն

Տոնոյան Անդրանիկ

Հարությունյան Լիլիա

Ջուլհակյան Արմեն

Մարտիրոսյան Մարտուն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«03» մարտի 2022 թվականի N 17-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 01.02.2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 02-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ N 2-Ի ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 67-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու կանոնակարգի 3-րդ գլխի 25-րդ կետով Ստեփանավան համայնքի ավագանին *որոշում է՝*

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու 01.02.2022 թվականի թիվ 02-Ա որոշման հավելված N 2-ի մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ էներգետիկ կառավարչի դրույքաչափը 110000 (մեկ հարյուր տաս հազար) ՀՀ դրամի փոխարեն սահմանել 200000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու 01.02.2022 թվականի թիվ 02-Ա որոշման հավելված N 2-ի մեջ կատարել հետևյալ լրացումը՝ հաստիքացուցակի «Քաղաքացիական աշխատանք կատարող» մասում ավելացնել խմբակցությունների 3 (երեք) գործավարների և 3 (երեք) փորձագետների հաստիքներ՝ 93289 (իննսուներեք հազար երկու հարյուր ութսունինը) ՀՀ դրամ դրույքաչափով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանիներ.

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| Գրիգորյան Արմեն | | |
| Աբրահամյան Հրահատ | | |
| Մարտիրոսյան Հմայակ | | |
| Իսպիրյան Անուշ | | |
| Պապյան Լևոն | | |
| Գրիգորյան Արմեն Փ. | | |

Բաղդասարյան Անուշ
Պապինյան Արմեն
Դավթյան Արմեն
Պապյան Արթուր
Հակոբյան Վանո
Նալբանդյան Աղունիկ
Կիրակոսյան Ջոն
Տոնոյան Անդրանիկ Ձեռնպահ
Հարությունյան Լիլիա
Ջուլհակյան Արմեն
Մարտիրոսյան Մարտուն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված 2
ՀՀ Լոռու մարզի
Ստեփանավան համայնքի ավագանու
03.03.2022թ. թիվ 17-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝
Հաստիքների թվաքանակը՝ 52

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ

| *N* | *Հաստիքի անվանումը* | *Հաստիքային միավորը* | *Պաշտոնային Դրույքաչափը* | *Հավելավճարը* |
|---|---|---|---|---|
| | | **Քաղաքական պաշտոններ** | | |
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 440000 | |
| 2 | Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ | 1 | 295000 | |
| 3 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 285000 | |
| | | **Հայեցողական պաշտոններ** | | |
| 1 | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 215000 | |
| 2 | Համայնքի ղեկավարի խորհրդական | 1 | 215000 | |
| | | Վարչական պաշտոններ | | |
| 1 | Վարչական ղեկավար | 3 | 200000 | |
| | | Համայնքային ծառայության պաշտոններ | | |
| 1 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 275000 | |
| | | Քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժին | | |
| 1 | Բաժնի պետ | 1 | 255000 | |
| 2 | Գլխավոր մասնագետ - ճարտարապետ | 1 | 200000 | |
| 3 | Գլխավոր մասնագետ | 1 | 200000 | |
| 4 | Առաջատար մասնագետ-հողաշինարար | 1 | 150000 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 5 | Առաջատար մասնագետ | 2 | 150000 | |
| Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին | | | | |
| 1 | Բաժնի պետ | 1 | 255000 | |
| 2 | Բաժնի պետի տեղակալ | 1 | 235000 | |
| 3 | Գլխավոր մասնագետ | 1 | 200000 | |
| 4 | Առաջատար մասնագետ | 3 | 150000 | |
| 5 | Առաջին կարգի մասնագետ | 4 | 130000 | |
| Զարգացման ծրագրերի,տուրիզմի,առևտրի սպասարկման և գովազդի բաժին | | | | |
| 1 | Բաժնի պետ | 1 | 255000 | |
| 2 | Գլխավոր մասնագետ | 1 | 200000 | |
| 3 | Առաջատար մասնագետ | 2 | 150000 | |
| 4 | Առաջին կարգի մասնագետ | 2 | 130000 | |
| Աշխատակազմ (կառուցվածքային ստորաբաժանումների մեջ չներառված պաշտոններ) | | | | |
| 1 | Գլխավոր մասնագետ-իրավաբան | 1 | 200000 | |
| 2 | Գլխավոր մասնագետ ՔԿԱԳ | 1 | 166500 | |
| 3 | Գլխավոր մասնագետ | 1 | 200000 | |
| 4 | Գլխավոր մասնագետ | 1 | 200000 | |
| 5 | Առաջատար մասնագետ | 3 | 150000 | |
| 6 | Առաջին կարգի մասնագետ | 3 | 130000 | |
| Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ | | | | |
| 1 | Գործավար | 1 | 150000 | |
| 2 | Վարորդ | 1 | 105000 | |
| 3 | Ցանցային ադմինիստրատոր | 1 | 120000 | |
| 4 | Ցրիչ | 1 | 89611 | |
| 5 | Հավաքարար | 3 | 95000 | |
| 6 | Հսկիչ | 2 | 100000 | |
| Քաղաքացիական աշխատանք կատարող | | | | |
| 1 | Տնտեսվար էլեկտրիկ | 1 | 200000 | |
| 2 | Էներգետիկ կառավարիչ | 1 | 200000 | |
| 3 | Խմբակցությունների գործավարներ | 3 | 93289 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4 | Խմբակցությունների փորձագետներ | 3 | 93289 | |
| | ԸՆԴՀԱՄԵՆԸ | **58** | **9 530 845** | |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«03» մարտի 2022 թվականի N 18-Ա

### ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ և 64-րդ հոդվածներով Ստեփանավան համայնքի ավագանին *որոշում է*

1. Ստեփանավան համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի չորրորդ նիստի գումարման օր սահմանել 08/04/2022թ., ժամը 14:00 -ին:

Համայնքի ավագանիներ.

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| Գրիգորյան Արմեն | | |
| Աբրահամյան Հրահատ | | |
| Մարտիրոսյան Հմայակ | | |
| Իսպիրյան Անուշ | | |
| Պապյան Լևոն | | |
| Գրիգորյան Արմեն Փ. | | |
| Բաղդասարյան Անուշ | | |
| Պապինյան Արմեն | | |
| Դավթյան Արմեն | | |
| Պապյան Արթուր | | |
| Հակոբյան Վանո | | |
| Նալբանդյան Աղունիկ | | |

Կիրակոսյան Ջոն

Տոնոյան Անդրանիկ

Հարությունյան Լիլիա

Ջուլհակյան Արմեն

Մարտիրոսյան Մարտուն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«03» մարտի 2022 թվականի N 19-Ա

### ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՍԻՆԻ ՓՈՂՈՑ 56/19 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԻՉ ԹԱՄԱՐԱ ԴԱՎԹՅԱՆԻՆ ԵՎ Մ. ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂՈՑ 2/14 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԻՉ ՆՈՅԵՄԶԱՐ ՍԱՐԳՍՅԱՆԻՆԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2022 թվականի հունվարի 02-ին տեղի ունեցած հրդեհի հետևանքով վնասվել է Թամարա Դավթյանին պատկանող Դեսինի փողոց թիվ 56/19 հասցեի բնակարանը և գույքը: Թամարա Դավթյանը միայնակ հաշմանդամ է և իր ուժերով չի կարողանում վերանորոգել բնակարանը, իսկ Մ. Խորենացի փողոց թիվ 2/14 հասցեի բնակիչ Նոյեմզար Սարգսյանի բնակելի տունը խարխլված է և վտանգավոր է բնակության համար: Նոյեմզար Սարգսյանի ընտանիքի անդամներից ոչ մեկ չի աշխատում և ամուսինը ունի հաշմանդամության խումբ:

Վերը նշված բնակարանը և բնակելի տունը Մասնակի վերանորոգելու համար անհրաժեշտ է գումար որը վերջիններս չեն կարողանում հայթայթել:

Թամարա Դավթյանը և Նոյեմզար Սարգսյանը դիմել են Ստեփանավան համայնքի ավագանու անդամներին՝ դրամական աջակցություն ցուցաբերելու խնդրանքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով Ստեփանավան համայնքի ավագանին *որոշում է*՝

1. Ստեփանավան համայնքի բյուջեից Թամարա Դավթյանին և Նոյեմզար Սարգսյանին հատկացնել դրամական աջակցություն 100000-ական (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Համայնքի ավագանիներ.

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գրիգորյան Արմեն | | | |
| Աբրահամյան Հրահատ | | | |
| Մարտիրոսյան Հմայակ | | | |
| Իսպիրյան Անուշ | | | |
| Պապյան Լևոն | | | |
| Գրիգորյան Արմեն Փ. | | | |

Բաղդասարյան Անուշ

Պապինյան Արմեն

Դավթյան Արմեն

Պապյան Արթուր

Հակոբյան Վանո

Նալբանդյան Աղունիկ

Կիրակոսյան Ջոն

Տոնոյան Անդրանիկ

Հարությունյան Լիլիա

Ջուլհակյան Արմեն

Մարտիրոսյան Մարտուն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«03» մարտի 2022 թվականի N 20-Ա

## ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ստեփանավան համայնքի ղեկավարին են դիմել բռնցքամարտի խմբակի սաների ծնողները, խնդրելով դրամական աջակցություն: Խմբակի սաները բազմաթիվ հաջողություններ են ունեցել տարբեր միջազգային մրցաշարերում և արժանացել են բարձր մրցանակների: Հերթական առաջարկը ստացել են Ռուսաստանի Դաշնությունից միջազգային մրցույթին մասնակցելու համար: Սաների ծնողները խնդրում են դրամական աջակցություն ցուցաբերել իրեց երեխաների ճանապարհածախսի համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով Ստեփանավան համայնքի ավագանին *որոշում է*՝

1. Ստեփանավան համայնքի բյուջեից տրամադրել դրամական աջակցություն 300000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ, բռնցքամարտի խմբակի սաների ճանապարհածախսի համար:

Համայնքի ավագանիներ.

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| Գրիգորյան Արմեն | | |
| Աբրահամյան Հրահատ | | |
| Մարտիրոսյան Հմայակ | | |
| Իսպիրյան Անուշ | | |
| Պապյան Լևոն | | |
| Գրիգորյան Արմեն Փ. | | |
| Բաղդասարյան Անուշ | | |
| Պապինյան Արմեն | | |

...թյան Արմեն

...ապյան Արթուր

Հակոբյան Վանո

Նալբանդյան Աղունիկ

Կիրակոսյան Ջոն

Տոնոյան Անդրանիկ

Հարությունյան Լիլիա

Ջուլհակյան Արմեն

Մարտիրոսյան Մարտուն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«03» մարտի 2022 թվականի N 21-Ա

## ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԾԱՂԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ստեփանավան համայնքի ղեկավարին է դիմել Ստեփանավան համայնքի, Իսահակյան փողոց, թիվ 3/4 հասցեի բնակիչ Ծաղիկ Սարգսյանը: Վերջինիս որդին զոհվել է 1993 թվականի Արցախյան պատերազմում, իսկ թոռը զոհվել է 27.09.2020 թվականին սկսված՝ 44-օրյա Արցախյան պատերազմում: Ծաղիկ Սարգսյանի ապրուստի միակ միջոցը՝ թոշակն է:

14.02.2022 թվականի դրությամբ Ստեփանավան համայնքի, Իսահակյան փողոց, թիվ 3/4 հասցեի ջրամատակարարման և ջրահեռացման դիմաց կուտակված պարտքը կազմել է 69584, 30 ՀՀ դրամ: «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-Ն Ծաղիկ Սարգսյանին վերը նշված գումարից զիջել է 34792,15 ՀՀ դրամը:

Ստեփանավանի համայնքապետարանը կուտակված պարտքի մյուս մասը մարելու նպատակով Ծաղիկ Սարգսյանին կտրամադրի 35000 ՀՀ դրամ:

Հիմք ընդունելով Ծաղիկ Սարգսյանի կողմից 28.02.2022թ ներկայացված թիվ Ս-98 դիմումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով Ստեփանավան համայնքի ավագանին *որոշում է*

1. Ստեփանավան համայնքի բյուջեից Ծաղիկ Սարգսյանին տրամադրել դրամական աջակցություն՝ 35000 (երեսունհինգ հազար) ՀՀ դրամ:

Համայնքի ավագանիներ.

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| Գրիգորյան Արմեն | | |
| Աբրահամյան Հրահատ | | |
| Մարտիրոսյան Հմայակ | | |

[illegible]սպիրյան Անուշ

Պապյան Լևոն

Գրիգորյան Արմեն Փ.

Բաղդասարյան Անուշ

Պապինյան Արմեն

Դավթյան Արմեն

Պապյան Արթուր

Հակոբյան Վանո

Նալբանդյան Աղունիկ

Կիրակոսյան Ջոն

Տոնոյան Անդրանիկ

Հարությունյան Լիլիա

Ջուլհակյան Արմեն

Մարտիրոսյան Մարտուն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ